ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1952-Ա « 19 » մայիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՎԱՐՇԱՎՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.86/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՐՄԱՆ ՎԱՐԴԳԵՍԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Արման Վարդգեսի Կարապետյանի (ծնված 24.06.1983թ.) դիմումը (04.05.2023թ. հ.Դ-52850-23)։ Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վարշավյան փողոցի հ.86/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 262.83քմ, որից 38.46քմ մակերեսով հողամասը Արման Վարդգեսի Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (որն ընդհանուր սեփականություն է /38.46քմ/ Մարիետա Խաչիկի Պետրոսյանի հետ՝ Վարշավյան փողոց հ.86 հասցեի հետ, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական 11.07.2023թ. հ.11072023-01-0331)։

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի 18.07.2023թ հ.ԱՏ-18072023-01-0761, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 22.08.2023թ. հ.10957 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 24.03.2025թ. հ.20-Եղ-Դ-52850-23 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վարշավյան փողոցի հ.86/1 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ.

1.Վերականգնել Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վարշավյան փողոցի հ.86/1 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Արման Վարդգեսի Կարապետյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման

համար անհրաժեշտ օրինական 38.46քմ (որը ընդհանուր սեփականություն է /38.46քմ/ Մարիետա Խաչիկի Պետրոսյանի հետ՝ Վարշավյան փողոց հ.86 հասցեի հետ) մակերեսով հողամասին կից 224.37քմ մակերեսով հողամասի չափով, ճանաչելով նրա սեփականության իրավունքը 224.37քմ մակերեսով հողամասի և շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3. Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ք.Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վարշավյան փողոցի հ.86/1 հասցեում գտնվող 262.83քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վարշավյան փողոցի հ.86 հասցեի բնակելի տանը տրամադրել «Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Վարշավյան փողոց հ.86/1» հասցեն:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինու-թյան վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ